20528

№ 111.

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՍՈՒՐԲ ԳԱՅԻԱՆԵԱՆ

ՀԱՅ ՕՐԻՈՐԴԱՑ

ԵՐԿՊԱՍԵԼՆ ԾԽԱԿԱՆ ՈՒՍԱՒՄՆԵՐՈՒՆԻ ՀԱՄԱՐ

БИБЛИОТЕКА
Институт
Народов Востока
Академии Наук
С С Р
ПЕЧАТЬ АЗІАТСКАГО МУЗЕУМА
SIG MUS. ASIAT C A E P

ՏՓԽԻՍ
Արագ. Տպար. Մ. Մարտիրոսեանցի եւ Ընկ.
Միքայէլեան փող. տուն № 81.
1895

2010

373
Գ-26

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

№ 2002

ՍՈՒՐԲ ԳԱՅԻԱՆԵԱՆ

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

ՀԱՅ ՕՐԻՈՐԴԱՅ

ԵՐԿՊԱՍԵԱՆ ԹԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ՏՓԽԻՍ.
Արագ. տպար. Մ. Մարտիրոսեանցի եւ Ընկ.
Միքայէլեան փող. տուն № 81.
1895

Дозволено цензурою. Тифлисъ, 7-го Ноября 1895 года.

5056-ակ

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС. Библиотека
ZUUՈ-Арм.ССР
Ս. ՄԱՍՆԵՑՈՒ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

36026-66

Հաստատեցով սոյն կանոնները, թոյլ եմ տալիս տպագրել եւ տալ աշակերտաբնակներին ի հրահանգութիւն: 5 նոյ. 1895 թ. Տփխիս: Թեմ. տեսուչ Մ. Քէ. Մելիքեան.

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Սուրբ Գայիանեան Հայ օրիորդաց երկդասեան ծխական ուսումնարանի համար:

Ա.

I.

ԴԱՍԻՑ ԱՌԱՋ

1.

Զանգը խփելուց հինգ բոպէ առաջ պէտք է դպրոցում լինել:

2.

Դպրոց մտնելուց առաջ կօշիկները պէտք է մաքրել դրսում:

3.

Գլխարկը և վերարկուն պէտք է կախ անել որոշեալ տեղերում. կրկնակօշիկները հա-

նել որոշեալ բաժանմունքում և հանգիստ ձևով դասատուն մտնել։

4.

Պայուսակները սեղանի արկղում դնելուց յետոյ՝ տաք եղանակներին բաց իջնել, իսկ վատ եղանակին դահլիճ գնալ։

5.

Մաղերը սանտրած, եղունգները կտրած, երեսն ու ականջները մաքուր պիտի լինին. զգեստները չպիտի պատառոտած լինին։

6.

Դասարանում չպիտի մտնել, աղմուկ հանել, նախաճաշել։ Առաջին բաժանմունքը նախաճաշում է երկրորդ, իսկ միւս բաժանմունքները՝ երրորդ դասամիջոցին։

7.

Առաջին դասից հինգ բոպէ առաջ զոյգ զոյգ կանգնած գնում են դահլիճ աղօթելու և կանգնում են որոշած տեղում։ Ցուրտ եղանակին դասարանումն են աղօթում։

8.

Աղօթքն սկսում է այսպէս—աշակերտու-

հիներից մինը, որին վարժուհին պատուիրում է, բարձր ձայնով երգում է «Հայր մեր», իսկ միւսները խմբովին ձայնակցում են «որ յերկինս ես.....»։ Հայր մերից յետոյ թիւ ասում են «Ամենարարի Աստուած .....» աղօթքը, իսկ Զատկից մինչև Համբարձում—«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

9.

Աղօթքից յետոյ նոյն ձևով դառնում են դասարան և սպասում ուսուցչին։ Երբ ուսուցիչը ներս է գալիս, ամենքը վեր են կենում, ողջունում են և ապա նստում։

II.

ԴԱՍԻ ՍԿԶԲԻՆ

10.

Ուշ եկող աշակերտուհիները չեն նստում իրանց տեղը, այլ սպասում են դասատանը՝ մինչև որ ուսուցիչը յարմար ժամանակում իրաւունք կտայ նստելու։

11.

Աշակերտուհիները պէտք է նստեն ուղղամէջքը նստարանին յենած, ձեռները փոփոխակի՝ երբեմն մէջքին դրած, երբեմն սեղանի վրայ։

12.

Ամենքն էլ ուսուցչին պիտի նայեն—խօսք, զրոյց, ուտել, կարդալ, ծիծաղ .... այս ամենը պէտք է վերացած լինին։

13.

Մինչև ուսուցչի գալը աշակերտուհիները դասին վերաբերեալ առարկաները պէտք է պատրաստ ունենան—գիրքը հանած, գրիչ, մատիտ ռետին, թանաքաման ..... սեղանի վրայ դրած։

14.

Գրքերի մէջ 1, թղթէ քանոններ պիտի լինին, որ հեշտութեամբ դանեն դասը. 2, գրքի մեծութեամբ մի թուղթ, որ կարդալիս ձեռքի տակ ունենան՝ գիրքը չկեղտոտելու համար (ա. բ. և գ. բաժանմունքում։)

III

ԴԱՍԻ ԺԱՄԱՆԱԿ

15.

Դաս պատասխանող աշակերտուհին պիտի խօսէ բարձր, հանգիստ, որոշ արտասանութեամբ՝ առանց ձեռքի։

16.

Եթէ աշակերտուհին կամենում է մի բան հարցնել կամ ուսուցչի տուած հարցին պատասխանել, պէտք է մատով նշան անէ։

IV

ԴԱՍԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ

17.

Դասամիջոցներին զոյգ զոյգ կանգնած դուրս են գալիս դասարանից։ Եթէ լաւ եղանակ է, իջնում են բակը, իսկ եթէ վատ եղանակ է, գնում են դահլիճ։ Նոյն կարգով վերադառնում են դասարան։

18.

Ոչ ոք իրաւունք չունի դասարանում մնալ, բացի օրապահ և այն տկար աշակերտուհիներից, որոնց բժիշկը իրաւունք է տուել դպրոց յաճախելու։

V

ԴԱՍԻ ՎԵՐՋԸ

19.

Դասի վերջը օրապահը «Գոհանամք զքէն» աղօթքն է ասում ուսուցչուհու կամ ուսուցչի ներկայութեամբ։

20.

Վերջին աղօթքից յետոյ զոյգ-զոյգ գնում են հանդերձատուն, հագնում են վերարկուներն ու կրկնակօշիկները, ծածկում են գլխարկները, մնաս բարև ասում դասարանական վարժուհուն և նոյն կարգով գնում մինչև փողոց։

21.

Օրապահը մնում է դասարանում և նայում է, թէ չկան արդեօք մոռացուած իրեր և եթէ գտնում է այդպիսիք, յանձնում է դասարանական վարժուհուն։

22.

Փողոցում, եթէ պատահեն վարչութեան անդամներին, ուսուցչուհիներին կամ ուսուցիչներին՝ պէտք է ողջունեն։

23.

Փողոցից մինչև տուն հասնելը ոչինչ անվայել արարք չպիտի տեղի ունենայ։

Բ.

ՕՐԱՊԱՀՆԵՐԻ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

24.

Օրապահները պարտաւոր են՝

ա. Առաջին դասից 10 րոպէ վաղ դալ դպրոց,

բ. Մաքրել գրատախտակը և ուսուցչի սեղանը,

գ. Ջնջոց և կաւիճ պատրաստել,

դ. Դասամիջոցներին պատուհանները բաց անել,

ե. Հոգալ, որ միշտ ջուր լինի ջրշիշում,

զ. Ուսուցչի համար գիրք, մատիտ, գրիչ, թանաք .... ունենալ սեղանի վրայ,

է. Թուղթ, հացի փշրանք ..... չպիտի թափուած լինի յատակի վրայ,

ը. Դասի վերջը նայել, եթէ մոռացուած իրեր կան, յանձնել դասարանական վարժուհուն,

թ. Եթէ կոտրած ապակի կամ որ և իցէ փչացած դասարանական իր կայ, պէտք է յայտնէ դասարանական վարժուհուն։

Գ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

25.

Դպրոցը բացւում է սեպտեմբերի մէկից. վերաքննութիւններն սկսւում են օգոստոսի 25-ից և տևում են մինչև սեպտեմբերի մէկը։

26.

Դասերն սկսւում են՝

ժամը 8-ին սեպտ. 1—1-ն նոյեմբերի.
,, 8½ նոյեմբ. 1—1-ն ապրելի.
,, 8 ապր. 1—1-ն յունիսի։

27.

Մի, կամ մի քանի օրով ուշացող աշակերտուհին տանից գրաւոր բացատրութիւն է բերում և կամ ծնողները, ազգականները..... անձամբ ներկայանում և բացատրութիւն են տալիս։

28.

Աշակերտուհիներին արգելւում է հրապարակական հանդէսներին ներկայ լինել։ Թատրոն կամ կոնցերտ գնալիս աւագ ուսուցչից պէտք է իրաւունք ստանալ։

29.

Զրիավարժ կարող են ընդունուիլ այն աշակերտուհիք, որոնք չքաւոր են և աշխատասէր։

Դ.

ՏՕՆԵՐ

Ա. (եկեղեցական)

30.

1. Դեկտ. 28-իվերջի դասից ց9-ն յունվ.—11 օր։
2. Բուն բարեկենդանի չորեքշաբթի վերջին դասից մինչև Մեծի պահոց երկրորդ օրը՝ երեքշաբթի—5 օր։

3. Ղազարու յարութեան շաբաթ օրուայ վերջին դասից մինչև Կրկնազատկի երկուշաբթի—15 օր։
4. Յունուարի 13-ն ոսն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։
5. Փետրվարի 14-ին ոսն քառասնօրեայ գալստեան տեառն ի տաճարն։
6. Ապրիլի 7-ն ոսն Աւետեաց սուրբ Աստուածածնի։
7. Տօն մտին ի վիրապն Ս. Գր. Լուսաւորչի։
8. Տօն ելիցն ի վիրապէ Ս. Գր. Լուսաւորչի։
9. Տօն գիւտի նշխարաց Ս. Գր. Լուսաւորչի։
10. Տօն Սրբոց Թարգմանչաց Սահակայ և Մեսրովպայ հայրապետացն։
11. Տօն Սրբազան առաքելոյն Թադէոսի և և սրբուհւոյ Սանդխտոյ կուսին։
12. Տօն նախկին լուսաւորչաց Հայաստանի սրբազան առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի։
13. Սեպ. 8-ն ոսն Ծննդեան Ս. Աստուածածնի ի յԱննայէ։
14. Նոյեմբ. 21-ին ոսն ընծայման Ս. Աստուածածնի ի տաճարն։
15. Դեկտ. 9-ին ոսն յղութեան Ս. Աստուածածնի ի յԱննայէ։

Բ. (Հայրապետական)

1. Տօն անուակոչութեան Վեհափառ Հայրապետի Ամենայն Հայոց։
2. Տօն տարեդարձի օծման Վեհափառ Հայրապետի Ամենայն Հայոց։

Գ. (Կայսերական)

1. Ծնունդ Նորին Կայսերական Մեծութեան։
2. Գահակ. ,, ,, ,,
3. Անուան. ,, ,, ,,
4. Ծնունդ Նորին Կայսեր. Մեծ. Կայսրուհւոյ։
5. Անուան. ,, ,, ,, ,,
6. Ծնունդ ,, ,, ,, Ժառ. Կայսեր։
7. Անուան. ,, ,, ,, ,, ,,

Առաջ տուողին՝ Ս. Ք. ՍԱՀԱԿԵԱՆՑ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՍՍՌ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUՌ-Арм ССР
Ս. ՍՄՄ Ա. Մյասնիկյան

20528
2010
<< Ազգային գրադարան
NL0055272

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

373
Ч-26